



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդարանս հետեւեալ կոչը ստացած է Լոս Անճելըսի մէջ Լիբանանի Հիւպատոսարանէն. գլխաւոր հիւպատոսին փափաքին ընդառաջելով, գայն կը փոխանցենք մեր մամուլին, առ ի հրատարակութիւն.-

ԿՈՉ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՐ ԲՈՒՈՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Իսրայէլեան վերջին բարբարոս ու տակաւին շարունակուող յարձակումներուն որպէս հետեւանք, Լիբանան ենթարկուած է տագնապալի վիճակի. Լիբանանի Վարչապետը Լիբանանը յայտարարած է «**Աղետեալ Երկիր**», կոչ ուղղելով բոլոր հաստատութեանց եւ բարեկամ երկիրներուն՝ օգնութեան ձեռք երկարելու Լիբանանի:

Լոս Անճելըսի մէջ Լիբանանի Հիւպատոսարանը եւս, իր կարգին կոչ կ'ուղղէ իր բոլոր հայրենակիցներուն, տեղական հաստատութեանց, միութեանց եւ կազմակերպութեանց, օժանդակելու մեր հարազատներուն, որոնք ամենօրեայ յաճախակիութեամբ կ'ենթարկուին ահաւոր յարձակումներու:

1.- Տրամադրել նիւթական օժանդակութիւն.-

Լիբանանի Ելեւմուտքի Նախարարութիւնը դրամատնային հետեւեալ հաշիւները բացած է Ձեր դրամական նուէրները ընդունելու համար .-

Ա.- Ամերիկեան տոլարով 02 700 362123 հաշիւին
Federal Reserve Bank of New York- New York
Bic Code FRNYUS33 Routing Number: 021084694
Favor Banque Du Liban- Account number

Բ.- Լիբանանեան դրամանիշով
Banque Du Liban – Account Number 01 700 362123

2.- Ոչ դրամական օժանդակութիւններ.-

Լիբանանի Օժանդակութեանց Գերագոյն Խորհուրդը հրապարակած է անմիջականօրէն անհրաժեշտ նկատուած հետեւեալ պիտոյքներու ցուցակը.-

Ա.- Ուտեստեղէն եւ այլք

- Կաթնեղէն, երեխաներու սննդանիւթեր եւ ներքնազգեստներ
- Տփեղէն, անուշեղէն, բրինձ, շաքար եւ ընդեղէն
- Կաթասներ եւ խոհանոցային զանազան պիտոյքներ

Բ.- Դեղեր

- Մանուկներու համար՝ փորհարութեան, *անթիպայոթիք*, ջերմութիւն փարատող եւ հանդարտեցուցիչ դեղեր
- Չափահասներու համար՝ սրտի, շաքարախտի, արեան ճնշումի, մորթային հիւանդութեանց դեղեր
- Ջուրի հականեխիչ (քլոր), բշկական հականեխուած ձեռնոցներ երիկամներ լուալու գտիչներ...
- Դեղեր պահելու յատուկ սառնարաններ

Գ.- Պատասպարուելու պիտոյքներ

- Վրաններ
- Ծացկոցներ եւ վերմակներ
- Ելեքտրականութիւն արտադրող գործիքներ (generators) 5-10-20-30 KVA
- Հողամբարձ եւ ծանրաբարձ գործիքներ

Դ.- Հրշէջային Պիտոյքներ

- Հրշէջային զանազան գործիքներ՝ զանազան չափերով, նաեւ հեղուկներ
- Հրշէջներու յատուկ ջուրի խողովակներ

Ելեմուտքի Խորհուրդներ

Օժանդակութեան Գերագոյն Խորհուրդի դրամատնային հաշիւին թիւն է՝

Պէյրութ- Լիբանան 760051114

Կը յուսանք, որ մեր բոլոր հայրենակիցները, կրօնական, կուսակցական, մշակութային եւ գաղթաշխարհի այլ հաստա-տութիւնները միահամուռ կերպով կ'ընդառաջեն մեր ԱՆՄԻՋԱԿԱՆ կոչին ու ԱՆՅԱՊԱՂ օժանդակութեան ձեռք կ'երկարեն Լիբանանի կառավարութեան, որպէս արտայայտութիւն մեր միասնակութեան ու իրերօգնութեան, եւ որպէսզի մենք ալ կարենանք մեր կարգին շուտափոյթ օժանդակութիւն հասցնել աղետեալներուն:

**Լիբանանի Ընդհանուր Հիւպատոս
Շարպէլ Ուահպէ**